ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԸՎԱՃՅԱՆԻ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ՇՈՒՐՋ

Վ. Դ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

«Մեղու» պարբերականի նյութերի ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ իր լույս տեսնելու օրից (1856) այն չի հանդիսացել զուտ արևմտահայ դեմոկրատիայի օրգանը, և դա մեր համոզմամբ այն պատճառով, որ մինչև սահմանադրության հրապարակումը (1860) հանդեսի էջերում հաշտ կերպով գոյակցել են դեմոկրատական և լիբերալ-բուրժուական բովանդակության հոդվածները, իսկ որովհետև վերջիններս ճնշող մեծամասնություն են կազմել, ապա ստացվել է այն սխալ տպավորությունը, թե իր հրապարակախոսական գործունեության առաջին շրջանում Հ. Սըվաճյանը հարել է, անշուշտ, իր ժամանակի համար նույնպես առաջադիմական, բայց լիբերալ հոսանքին։

Նման չտարրալուծված փաստարկումը անհստակություն է մտցնում XIX դ. 50-ական թվականների արևմտահայ քաղաքական հոսանքների առընչություններն ըմբռնելու գործում, ուստի ավանդական դարձած այդ տեսակետը վերանայելու խնդիրը կարևոր է թվում։

«Մեղվի» լիբերալ ընկերակցությունը՝ հանդեսը հովանավորող Գր. Օտյանի ղեկավարությամբ, պարբերականի էջերում հրապարակում էր բազմաթիվ տեսական, պատմական, սոցիալ-քաղաքական հարցեր բարձրացնող ծավալուն, ծրագրային նյութեր, որոնք ըստ էության արտացոլում էին ժամանակի արևմտահայ լիբերալ-վերանորոգչական կանխատեսումները, և, որ ավելի կարևոր է, արդեն մեկ-երկու տասնամյակ ի վեր արծարծվում էին պոլսահայ բուրժուական լուսավորիչների ելույթներում ու պարբերական մամուլի էջերում։

Վերցնենք այս տեսակետից սկզբունքորեն կարևոր, բազմիցս հոլովված և չհիմնավորված կերպով Հ. Սըվաճյանին վերագրված «Լեհ գնդապետի մը մեր ազգին համար դատած արհեստը» նշանավոր հոդվածը[1]։ Այն իր մեջ խտացնում է անցյալ դարի 30—50-ական թվականների արևմտահայ լիբերալ-լուսավորական շարժման միտումները, որոնք, որպես գործունեության ծրագիր, դրվեցին 1860 թ. Կոստանդնուպոլսում հիմնադրված «Համազգային բարեգործական ընկերության» (այսուհետև՝ «Բարեգործական») կանոնադրության հիմքում[2]։ «Բարեգործականը», որի հիմնադիր ներկայացուցիչներից մեկը հայ նշանավոր գրող, լիբերալ մտայնության ներկայացուցիչ Հովսեփ Շիշմանյանն էր (Ծերենց), հետամտում էր մի հիմնական նպատակ, ազգի ունևորներից հավաքել 600 000 ղուրուշ, դրանով մի մեծ հողակտոր գնել Կիլիկիայում, այնտեղ փորձնական ագարակ ու երկրագործական դպրոց հիմնել, հողագործությունը լավ հասկացող հայ մասնագետներ պատրաստել, նրանց կցել հողի մշակներին և աստիճանաբար դեպի Կիլիկիա գրավել հայրենի երկիրը թողած ու կայսրության մեծ քաղաքներում ապրուստի միջոց որոնող պանդուխտներին, այս ձևով լուծել արևմտահայ ժողովրդի սոցիալական ծանր կացության անլուծելի խնդիրներից մեկը։

Հիշենք «Լեհ գնդապետի» խորհուրդը Փարիզից վերադարձող հայ մտավորականին, որն ամենայն հավանականությամբ կարող էր լինել հենց Գրիգոր Օտյանը, եթե ընդունենք, որ հոդվածի անձնավորումները գրական կերպար-

---

1 Տե՛ս Մեղու, 1856, № 3, էջ 62—67։

2 Տե՛ս Մասիս, 1860, № 455։

ներ չեն[3]։ «Գիտե՞ս,— ասում է լեհ գնդապետը,— ձեր ազգին երջանկության և հարստության միակ աղբյուրն որն է։ Ահա այս առատաբեր ու կակուղ հողերն են» և ցույց է տալիս Դարդանելի նեղուցի մոտ փռված «տափակ լեռներն ու ընդարձակածավալ դաշտերը»։ «Երկրագործությունն է միայն առհասարակ հայերուն առայժմ ունենալու է՛ն շահավոր և է՛ն հարմար արհեստը,— իր խոսքը լրացնում է գնդապետը,— վասն զի եթե ճարտարության հետևին, անոր ո՛ր ճյուղն որ բռնեն, եվրոպացիք իրենցմե ավելի վարպետ և շատ հառաջադեմ ըլլալով, չը պիտի կրնան անոնց հետ մրցիլ. գործարան մը շինեն՝ քիչ ատենեն զանի գոցելու պիտի պարտավորվին. հիմակվան ատենս անհնար է, ինչ և իցե բան մը անոնցմե աղեկ չէ, հապա անոնց պես շինել և անոնց վաստրկին գոնե կեսը վաստրկիլ»։ Ուստի, շարունակում է գնդապետը, երկրագործությունը տնտեսության բարգավաճման աղբյուր դարձնելով միայն կարելի է ֆրանսիացիների նման զարկ տալ նաև ճարտարությանն՝ (ինդուստրիա) ու վաճառականությանը[4]։

«Բարեգործականի» տնտեսական ծրագիրը սկզբունքային ոչ մի շեղում չի կատարել լեհ գնդապետի կանխագծումներից։ Հայաստանում երկրագործությունը ծաղկեցնելու նպատակով էր հիմնադրված Գր. Աղաթոնի երկրագործական ընկերությունը (1847 թ.), որի անդամներն էին ազգային լիբերալ գործիչներ Հ. Կրճիկյանը, Ս. Վիշենյանը, Հ. Մելիքյանը, Փ. Սթիմարաճյանը, Մ. Աղաթոնը, Ն. Զորայանը, Հ. Մոմճյանը և երկրագործական վարժարանը, ուր ընդգրկված էին հայ պատանիներ[5]։

Բոլորովին այլ բան է, որ «Բարեգործականին» անդամակցել էին նաև դեմոկրատ գործիչները։ Ելնելով հեղափոխական-դեմոկրատիայի դիրքերից «Երկրագործության» հեղինակը, օրինակ, լուսաբանում էր իր հայացքները՝ նյութ ունենալով անմիջապես պոլսահայ «Բարեգործականի» շուրջը խմբված հասարակական-քաղաքական հոսանքներին զբաղեցրած կոնկրետ հարցերը։ «Սրանով էլ,— գրում է Ա. Գ. Հովհաննիսյանը,— պայմանավորված է այդ աշխատության բովանդակությունն ու առերևույթ մի հակասությունը։ Մի կողմից՝ աչքի է ընկնում հեղինակի ռևոլյուցիոն-դեմոկրատական կողմնորոշումը, կապիտալիզմի և եվրոպական «քաղաքակրթության» սոցիալիստ-ուտոպիստական նրա քննադատությունը, մյուս կողմից՝ «տնտեսական հեղափոխության» նրա պլատֆորմը, ուր հեղինակի նպատակն էր ընդհանուր թշնամու— եվրոպական կապիտալի դեմ ապահովել լիբերալ-բուրժուական և ռևոլյուցիոն-դեմոկրատական ուժերի համագործակցությունը, կամ ինչպես արտահայտվում էր հեղինակը՝ «հավասարակշիռ զորություն» ստեղծել այդ ուժերի միջև՝ «ազգային թշվառությունը» վերացնելու համար»[6]։

«Ազգային թշվառությունը» վերացնելու և «հավասարակշիռ զորություն» ստեղծելու այդ մղումն էլ ստիպում էր Հ. Սրվանձյանին, Մ. Նալբանդյանի նման, համագործակցել «լեհ գնդապետի մը մեր ազգին համար դատած արհեստը» հոդվածում արծարծված լիբերալ-ռեֆորմիստական նպատակադրումներին, որոնք արևմտահայ կյանքի բարդ ու ծանր իրադրության մեջ ժողովրդի ապագան հարթելու այն ժամանակների համար դեռևս իրագործելի փորձ էր թվում։

Փոքր ինչ ետ գնալով հիշենք, որ մինչև «Լեհ գնդապետի մը...» հոդվածի լույս ընծայումը XIX դ. արևմտահայ լուսավորիչներից մեկը՝ Ն. Զորայանը, դեռևս 40-ական թվականներին Վենետիկում լույս տեսնող «Բազմավեպ» ամ-

---

3 Այս ենթադրությունն, անշուշտ, փաստացի հիմնավորման կարիք ունի։ Կարծում ենք պարզապես բացառված չէ, որ խոսակցությունը դրական հնարանք է՝ քաղաքական սկզբունքներ արծարծելու համար։

4 Մեղու, 1856, № 3, էջ 63—64։

5 Հայաստան, 1848, № 129։

6 Աշոտ Հովհաննիսյան. Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Երևան, 1955, էջ 505։

սագրում տպագրած իր հոդվածներում դնում էր հարուստ վաճառականներից կազմված ընկերություններ հիմնելու անհրաժեշտությունը, որը տնտեսապես զորավիգ լինելով ազգին, կարող էր մեծամեծ ձեռնարկումների և ժողովրդի բարեկեցության աղբյուր հանդիսանալ[7]։

Տաս տարի անց, այդ նույն բանն է հուշարկում հայ մտավորականին «լեհ գնդապետը», խորհուրդ տալով երկրագործությունը բարձրացնելու, կարիքն ու աղքատությունը վերացնելու համար հարուստներից կազմված ընկերություններ հիմնել, այս ձևով, նրանց ձեռնտվությամբ ընդհանուր բարեկեցության հասնել։ «Մշակը թող ստակ չունենա,— պարզաբանում է լեհ գնդապետը,—հարուստները կը դնեն դրամագլուխը, մշակներն ալ կաշխատին, որով հարուստները իրենք վաստկելեն զատ, մեծ բարերարություն մը ըրած կ'ըլլան այն խեղճերուն, անոնց որ իրենց երկրին մեջ հողագործության պարապելով օգուտ մը չը կրնան քաղել և պարտավորված են իրենց երկրեն և իրենց ընտանիքեն հեռու բաղդ մը փնտրելու ու անարգ արհեստներ գործելու»[8]։

Եթե դարձյալ վերանանք «Մեղվի» արծարծվող հոդվածից, ապա «Հայաստանի» և «Մասիսի» համարներում, ինչպես նաև «Նոյյան աղավնի» թերթում (1851—1852) կհանդիպենք հրապարակումների՝ որոնց հեղինակները առաջ են քաշում հարևնման հարցադրումներ։ Ինչպես և Գր. Աղաթոնը, երկրագործական կրթությունը Փարիզում ստացած և Օսմանյան կայսրության պաշտոնեության մեջ գտնվող Գ. Սթիմարաճյանը, օրինակ, գտնում էր, թե անհրաժեշտ է կազմել երկրագործական ընկերություններ, հողագործության մեջ ներդնել եվրոպական հողամշակման առաջավոր մեթոդներ, հայ գեղջուկին վարժեցնել դրանց, մինչև նա կսովորի ավելի շատ արդյունք քաղելու համար ավելի շատ աշխատել և դեպի գյուղ գրավել հազարավոր հայ պանդուխտներին, որոնք Կոստանդնուպոլսի մեջ զբաղված են «անվայել» և ստորացուցիչ աշխատանքով։ Նա կոչ էր անում հոգևորականներին օգիսներ դարձնել վանքապատկան հողերը և ֆրանսիացի կրոնավորների նման հողից օտարացածներին հողին վերստին կապելու օրինակ տալ, անջուջտ դարձյալ հողագործության մեջ տեսնելով հայ աշխատավորին նկուն վիճակից դուրս հանելու ելքը[9]։

Այս հարցադրումներն, ինչպես նշվեց, արդյունք էին արևմտահայ հասարակական կյանքում խմորվող նոր հարաբերությունների, սոցիալական նոր ուժերի զարգացման հողի վրա ձևավորվող լիբերալ-բուրժուական գաղափարախոսության, որի կրողները հետագայում պետք է առճակատեին «Մեղվի» դեմոկրատ խմբագիր Հ. Սրվանձյանի այլ բովանդակություն ունեցող հարցադրումների հետ։

«Մեղվի» էջերում, երբ դեռ տիրապետող էր լիբերալ մտայնությունը, կարող էին տպագրվել պատմական ակնարկներ չթագադրված արքայորդիների մասին, և դրանց հեղինակները միջոց չէին խնայում փառաբանելու այս կամ այն պատմական «դժբախտ» իրադարձության պատճառով գահ չբարձրացած թագաժառանգների կարճատև կյանքը և բարքը, որոշելով, որ նրանց չիրագործված արքայական պարտականությունների դիմաց հարկ է գոնե արժա-

---

7 Տե՛ս Ն. Զորայան, Վաճառականության և ընկերակցության օգուտներուն ու բարոյական և բնական աղդեցություններուն վրա (Բազմավեպ, 1847, Հավելված և նույն տեղում, 1848, № 13), նույնի՝ Տնտեսական տեղեկություններ, Կ. Պոլիս, 1849, Մասիս, 1852 թ. համարները, Հայաստան, 1849, № 107, 114, 145, 148, 149 և այլն։ Ի դեպ ժամանակի լիբերալ-բարեփոխիչ այս ծրագրերին ձայնակցում է նաև «Մեղուն» իր մեկ այլ հոդվածում (1857, № 12—15)՝ «Վաճառականության արդի վիճակը, օգուտները և մեր ազգին այս արհեստին մեջ համբակ և անտենչ ըլլալը» վերնագրով։

8 Մեղու, 1856, № 3, էջ 66։

9 Տե՛ս Հայաստան, 1849, 1950, Մասիս, 1852, № 3, Նոյյան աղավնի, 1851, № 1, 4, 23, 24, 25 և այլն։

նին հատուցել նրանց «մարտիրոսված» հոգիներին։ Այս շարքի մեջ ամենատիպականը գլխատված Լյուդովիկոս XVI-ի, նրա ընտանիքի և չթագադրված արքայորդու՝ խորհրդանշարար Լյուդովիկոս XVII-ի՝ բանտում անցկացրած օրերի ողբերգական շեշտերով գրված պատմությունն է, որտեղ բավական ակնառու դրսևորվում են հենց իր՝ հոդվածագրի ընկալումները, նրա ընդգծված հակակրանքը դեպի հեղափոխություն կատարողները, հասարակ մարդիկ, որոնք չգիտեին, թե ում վրա էին ձեռք բարձրացնում և ում էին իրենց կամքը թելադրում[10]։

Անստորագիր այս հոդվածի հեղինակի իդեալը լուսավորված միապետն է, որպիսին էր նրա համողմամբ «բարի տանտերոջ մը պետք եղած բոլոր առաքինություններով օժտված» Լյուդովիկոս XVI-ը[11]։ Նրա, Ֆրանսիայի բարեբարի մասին խոսելիս, գրում է հոդվածագիրը, «լռել ու մինակ լալ պետք է»[12]։ Նկարագրելով «Լյուդովիկոս XVII-ի» այսինքն թագաժառանգի բանտային կյանքը, նա ծաղրում է երրորդ դասի կամ «քաղաքացիներից» սերած այն մարդկանց, որոնք «անկիրթ լինելով, թագաժառանգ կրթելու իրավունք են ստացել և քանի որ նրանք չէին սիրում «տրամաբանողներին», ուստի թագաժառանգից խլեցին բոլոր գրքերը, ձեռքը միայն «իրավունք մարդկան անունով մեկ մեծ ճառ մը տվին» ու զրկեցին նրան այն բոլոր հարմարություններից ու վայելքներից, որ տրված էին նրան «ի վերուստ»։ Զայրույթով է արձանագրվում այն հանգամանքը, որ թեև «բոլոր Եվրոպա Լուդովիկոս ԺԷ արքա Գաղղիո անվաներ էր անիկա, բայց Գաղղիայի մեջ գուլպա շինողներն ու խառնիճաղանճ ռամիկը գայլորդի կկանչեին անոր»[13]։ Այս մտայնությունը յակոբինյան դիկտատուրայի նկատմամբ բուրժուաազնվականական վերնախավի դիրքորոշման արտահայտությունն էր, որն իր դրսևորումն էր գտել նաև «Մեղվի» լիբերալ թղթակցի հիշյալ հոդվածաշարում։

Նման հոդվածները մինչ վաթսունական թվականների «Մեղվի» հրապարակախոսությանը չափավոր երանգ էին հաղորդում, թեև դրանով չէր սքողվում նպատակադրման տարբերությունը այնպիսի նյութերի միջև, ինչպիսին էր, օրինակ, 1857 թ. № 9-ից շարունակաբար մինչև № 19-ը լույս տեսնող «Պանդուխտն ի պանդոկ մահու մահճին մեջ» վիպակը, իրական մի պատում՝ իրոք ժողովրդական թշվառության մասին, աղետալի այն չարիքի, որը վիճակվել էր օտարության և մեծ քաղաքների պանդոկների ու քարվանսարաների գաղջ պատերի մեջ տրոհվող ու մեռնող հային[14]։

Ազգային ողբերգության, սոցիալական այս թեմայի գեղարվեստական մարմնավորումը, նրա վիպական իրականացումը թերևս կարելի է և կատարյալ չհամարել, բայց անշուշտ այդ չէր առաջնայինը նման հարցադրում ունեցող նյութի համար։ Այնտեղ վեր է հանված իշխողների կամայականությանը զոհ դարձած գեղջուկ երիտասարդի ծանր վիճակը։ Ավազակաբարո և մանրախնդիր վրեժխնդրության հետևանքով դժբախտանում են սիրող զույգերը։ Սրբատաճմլիկ է հայրենի վայրերից հավերժ կտրված, երբեմնի գեղեցիկ և ավյունով լի, իսկ այժմ հոգեպես և բարոյապես կոտրված, ֆիզիկապես հյուծված, սովի, մենակության ու կարոտի մեջ մեռնողի նկարագիրը։

---

10 Տե՛ս Մեղու, 1856—1857, № 2, 5, 6, 8—9, 11, 12, 13։

11 Նույն տեղում, 1856, № 8, էջ 176։

12 Նույն տեղում, էջ 180։

13 Նույն տեղում, 1857, № 9, էջ 202։

14 Ի դեպ, ասենք, որ այս վիպակը, պրոֆ. Ս. Մ. Բաղյանը անվերապահորեն վերագրում է Հ. Սրվանձյանին (տե՛ս Գրական թերթ, 1981, № 51)։ Թվում է, որ «Մեղվի» տպած այս և այլ բազմաթիվ նյութերը հեղինակներին ճշտելու համար դեռևս բանասիրական մանրակրկիտ աշխատանք պետք է կատարել, իսկ քանի դեռ այդ չի արված, դժվարանում ենք ամբողջովին համերաշխել հարգելի պրոֆեսորի հայտնած կարծիքին։ Բացառված չէ, որ վիպակի հեղինակը կարող էր լինել նաև Հ. Սրվանձյանի հայեցակետերը կիսող և գեղարվեստական արձակի ասպարեզում փորձեր կատարող մեկ այլ ժամանակակից։

Այս և վերը նշված չթագադրված արքայորդիների մասին հրապարակված նյութերի զուգահեռները բացահայտում են այն իրարամերժ մոտեցումները, որ ունեին «Մեղվի» հրատարակիչները սոցիալական ցածր խավերի ներկայացուցիչների, նրանց արժանիքների՝ այդ թվում նաև ապրած ողբերգությունների վերաբերյալ։

Սրվանձյանը իր ժողովրդի ներկա, կոնկրետ առօրյայով ապրող հրապարակախոս էր, նա շատ լավ տեսնում էր, որ այսօրվա վիճակից նրան չհանելու դեպքում վաղը կարող էր ուշ լինել, ուստի նա վաղվա օրը փրկելու մղումից հարցերը դնում էր միայն այսօրվա իրադրությունից ելնելով։ Նրա հոդվածները՝ և առաջին շրջանի, և հետսահմանադրական շրջանի, ստորագրված, թե չստորագրված, որովհետև իրենց այժմեականությամբ, ոճով և բովանդակությամբ դրանք հեշտությամբ առանձնանում են լիբերալ ուղղության մյուս չստորագրված հոդվածներից, արծարծում են ժողովրդի կյանքի համար վճռական նշանակություն ունեցող հրատապ խնդիրներ, այսօրվա հարց են դարձնում նրա հալածական վիճակը և մերկացնում են դրա սոցիալական ու քաղաքական արմատները։

Հայի հայրենիք ունենալու հարցը, սեփական հայրենիքից օտարվելու, այլ ազգերի հետ ձուլվելու և կամ իր իսկ հայրենիքում ազատությունն ու հավատը կորցնելու և դրանով իր դիմագիծը տրոհելու կարևորագույն պրոբլեմները դեռ մինչև սահմանադրության հրապարակումը խոր մտահոգություն են պատճառել Սրվանձյանին։ Կարծում ենք նրա այս ընկալումներին և մտածելակերպին բնորոշ է «Հայ գաղթականություն» անստորագիր հոդվածը[15], որը մատնում է հեղինակի մեծ տագնապը իր երկիրը ստիպողաբար լքող ժողովրդի հետագա ճակատագրի հանդեպ՝ օտար երկինքների տակ։

«Չեչաններին» կամ մահմեդական լեռնցիների տեղաշարժը դեպի Թուրքիա, աննկարագրելի փոթորիկ է առաջացնում հրապարակագրի հոգում, և նա տրտմած գրում է, թե «Իսկյութարի ծովասանդուխտին» ամեն հայի աչքեր արտասուքով են լցվում, երբ տեսնում է այս մարդկանց տարագրությունը, որոնք թողած իրենց հայրենիքը, տունը, տեղը, եկել են ահա օտար մի երկիր։

Ի՞նչ են փնտրում նրանք այստեղ և ի՞նչն է դրդել նրանց թողնել հարազատ վայրերը։ Հայը, անցնում է նա իրեն տանջող թեմային, գաղթում է, որովհետև հայրենիքն այլևս անկարող է սատար լինել իր որդիներին, որոնց ոտքերի տակ այրվում է հայրենի հողը, և այդ հողը, իր որդիներին ծնած հողը, այլևս դարձել է այն դաշտը, ուր կոտորվում ու ոչնչանում են հայերը։ «Ան ատենն,— կարդում ենք հոդվածում,— երբ մայրն իր աղջկան արյունն կըտեսներ օձապտույտ գալարմամբ գետնին երեսը տան մեջ, սենյակներու, անկողիններու, օրոցներու մեջ վազելը, ան ատենն, որ բարեպաշտը սրբազան անոթներուն անարգվիլը, տաճարներուն պղծվիլը և տաճարներուն չափ սրբազան կույս աղջկանց առակվիլը արտասվաթոր աչքերով կը դիտեր... ան ատեն կ'ըսենք, որ մեռնելու կամք և հոժարություն ունեցողը կարող չէր իր մահվամբն իր ընկերին գեթ կյանքն ազատելու», երբ հայը կարող չէր մի թումբ անգամ լինելու վայրենի հորդաներին դիմագրելու համար, ի՞նչ էր մնում այն ժամանակ հային, եթե ոչ ձգելու հայրենիքը և փախչելու, երբ «Հայրենիքն ալ իրենք պահպանելու անկարող են...»[16]։

Բայց, համեմատություն է անցկացնում տարբեր ժողովուրդների ճակատագրերի մեջ հոդվածագիրը, ի՞նչն է ստիպում լքել հայրենիքը լեռնականներին, որոնք ահա թափվել են Իսկյուտարի նավահանգիստը։ Մի՞թե նրանց ոտքերի տակ էլ այրվում է հայրենի հողը։ Ռուսական տիրապետությունից փախչող լեռնականների արտագաղթը պախարակվում էր հոդվածագրի կողմից

15 Մեղու, 1859, № 26, էջ 204—207։

16 Նույն տեղում, էջ 204։

և դիտվում որպես դավաճանություն սեփական հայրենիքին[17]։ «Չեչանները,— գրում է նա,— կրնային իրենց երկրին մեջ նստիլ ու քիչ ատենեն գուցե ավելի երջանիկ ալ ըլլային. միայն իրենց ցարդ ունեցած ազատությունը կամ լավ։ ևս է ըսել ազատության եղանակը կորուսած պիտի ըլլային», չէ՞ որ, պարզաբանում է նա իր միտքը, «անոնց հայրենյաց տիրապետողը նախնի բարբարոս աշխարհակալներեն չէր, որ իրենց աշխարհակալության փառքը, գրաված երկիրներուն ավերակ ու անապատ դարձընելուն մեջ կը փնտռեին, այլ այն քաղաքակրթյալ աշխարհակալներեն է, որ իրենց ժողովրդին արյունովն ու գանձովը ձեռք բերած երկիրնի՛ն ալ քաղաքակրթյալ ընելու երջանկություն կը փափագին։ Ուստի՝ եզրակացնում է գրողը,— չեչանները կրնային աներկյուղ և ապագայի համար ալ վստահ՝ մնալ իրենց երկրին մեջ...»[18]։

Ժողովրդի տխուր ճակատագրի մասին «Մեղվի» հիշյալ № 26-ում արծարծված մտքերը հետագա զարգացում են ապրում «Ց. Գ. Սրվանձյան» ստորագրությամբ հրապարակված «Պատասխան առ Մասիս»[19], «Հավատափոխություն, առ ազնիվ պանտրմացիք և հետևաբար ամեն անոնք, որ ինչևիցե պատճառով մը հավատափոխության կը դիմեն» հոդվածներում[20], որոնցում բացահայտվում են ժողովրդին հավատափոխության մղող սոցիալական պատճառներն ու նրանց աղետալի հետևանքները, միևնույն է թե՝ հայրենիքը կորցնելու, ազգային նկարագիրը վտանգելու, ժողովրդի միասնականությունը խարխլելու վտանգները։

Իր խոսքերը Սրվանձյանն ուղղում է խռովահույզ բանդրմացիներին, որոնց հոգնատանջ էին արել տեղացի հայ մեծահարուստները և որոնց անտանելի չարաշահումներից ազատվելու համար Բանդրմայի ժողովուրդը, Կ. Պոլսի հայ պատրիարքարանից և թուրքական կառավարությունից ոչ մի օգնություն չըստանալով՝ դիմում էր հավատափոխության, խարվելով եվրոպական միսիոներների մեկնած խայծից։

Ժողովրդի ապագային դարանակալ ողբերգությունն ընկալվում է որպես անձնական ողբերգություն։ Պետականություն, ինքնուրույնություն չունեցող հայ ժողովուրդը փոխելով հավատը, օտարվում էր իր ազգակիցներից։ Կաթոլիկ կրոնին ապավինողը՝ կաթոլիկ պրոպագանդիստների թելադրանքով՝ այլևս դադարում էր հայ կոչվելուց և դառնում էր «հոռոմ հայ», իսկ բողոքականը՝ «հայ բրոթեսթան»։ Լուսավորչական հայերն էլ, անկարող ընկալելու եվրոպական քաղաքականության դավերը, ատելությամբ էին նայում կրոնափոխներին և ահա հայրենիքից, պետականությունից, անկախությունից զրկված մի բուռ ժողովուրդ զրկվում էր նաև իր ազգային միությունից, այնինչ, գրում է Հ. Սրվանձյանը, այս ծանր պարագայում, երբ «միությունը կը շինե ուժը» առանց այդ միության, պառակտման այս ուղիով, հայերը շուտով, ընկած մեծ տերությունների իշխանության տակ և մյուս կողմից էլ հալածվելով ու տրոհվելով, կոչնչանան ու կվերանան որպես ազգային միավորում։ Այսինքն՝ հավատափոխության երևույթի մեջ հրապարակախոսը նախ և առաջնում էր քաղաքական բովանդակություն, որն արդյունք էր եվրոպական տերությունների անազնիվ դիվանագիտության և դրանից է՛լ ավելի քաջալերված՝ Օսմանյան կայսրության վարած ֆիզիկական բնաջնջման, վաղեմի ուղեգծի։

1858 թ. Կոստանդնուպոլսի անգլիական նախկին դեսպանին՝ Ստրատֆորդ Քաննինգին փոխարինած Հենրի Բուլվերին ուղղված բաց նամակում, դարձյալ

---

17 Անշուշտ, ի նկատի ունի անցյալ դարի 40—50-ական թվականների ռուսական տիրապետության դեմ Շամիլի ղեկավարած ազատագրական շարժումը և դրա աղետալի հետևանքները արտագաղթի ենթարկված ժողովրդի ճակատագրում, երբ եվրոպական տերությունները, և հատկապես Անգլիան ու Թուրքիան փորձեցին մյուրիդիզմն օգտագործել Կովկասը Ռուսաստանից անջատելու և Թուրքիային միացնելու համար։

18 Մեղու, 1859, № 26, էջ 205։

19 Նույն տեղում, № 31, 33, 35։

20 Նույն տեղում, № 23, էջ 177—179։

ստորագիր, Հ. Սրվաճյանը վերը նշված իր մտքերը հրապարակային պարզաբանման է ենթարկում[21], որտեղ մասնավորապես գրված է. «Թվականես վեց ամիս առաջ ազգային ուրիշ ցավալի դեպքի մը առաջին անգամ լուրն իմ ընթերցողաց հաղորդած ատեն, զանի մեզի հաղորդող լրագրուն խմբագիրը կը հրավիրեի[22], իմ հետ միաբերան անեծք կարդալու այն անձանց գլխուն, որ ազգերնիս մաս մաս բաժնեցին և իրենց ձեռք բերած բաժինովը չը շատանալով՝ աշխատեցան և կ'աշխատին տակավին իրենց ժողովուրդը մեծցնելու և զորացնելու համար ազգին մեկ ամենամեծ մասը անոր զոհելու»։ Զուտ հորդորներով հայ ազգը հավատափոխ անելու քաղաքականությունը, որ ըստ կըզրում երկար տարիներ վարում էին օտարերկրյա միսիոներները, հաջողությամբ չպսակվեց, շարունակում է Հ. Սրվաճյանը, որովհետև հայերը համոզված էին, թե իրենց դավանանքն արդար է, քանի որ «Հանուն Քրիստոսի ուր որ երկու կամ երեք հոգի ժողվված ըլլան՝ հո՞ն է ան ալ անոնց մեջ»։ Ուստի միսիոներները դիմեցին այլ միջոցների։

Ճանաչելով այն երկիրը, ուր նրանք ծավալում էին իրենց գործունեությունը, կամ ինչպես Հ. Սրվաճյանն է ասում «Տաճկաստանի մեջ ազգության հիմ կրոնքը բռնված ըլլալով և հետևաբար Հայ եկեղեցիեն զատվող և ուրիշ եկեղեցվո մը մեջ մտնող հայերը կամ այն եկեղեցվույն տերն եղող ազգին մեջ կորսընվելու և կամ էն շատը ուրիշ Հայ հասարակություն մը կամ ազգ մը կազմելու պարտավորած են», միսիոներները միամիտ և ճնշված մի ժողովրդի վիճակից օգտվելով որոշեցին դիմել խաբեության, որն էր դավանափոխության դեպքում նրանց զանազան իրավացի և անիրավացի արտոնություններով օժտելը, խայծ, որին արդեն չդիմացան աղետալի վիճակում գտնըվող շատ հայեր։ Օտարերկրյա հոգեորսները, գրում է Սրվաճյանը, դիմեցին խարդախ այդ միջոցին, իմանալով, որ «վերջապես ամենուստ լքյալ Հայ ազգը իր իրավանցն ու արդարության պաշտպանությանը սիրուն անոնց եկեղեցին դիմե և զանոնք իրեն գլուխ ճանչե։ Ասոր վրա ավելցուցեք նաև ամեն ատեն, ամեն պարագայի մեջ հայերը դատապարտել տալու, անոնց այլ և այլ նեղություններ պատճառելու, անոնց իրավունքը ոտքի տակ առնելու կամ ձեռքերնուն հափշտակելու, ու զանոնք ամեն դատի մեջ անիրավ հանել տալու ջանքը»։ Այս բոլորին ավելացրեք, գրում է այնուհետև Սրվաճյանը, «նաև եվրոպական հզոր ու մեծամեծ տերություններ ալ, որոնց հետ բարեկամական հարաբերություններ ունի օսմանյան կայսրությունը, իրենց թև ու թիկունք ունենալու փափագը», թեև, հեգնանքով ավելացնում է հրապարակախոսը, «իբր թե հայերը չը գիտնային, որ այդ տերությունները ու ազգերը առ հասարակ ամեն քրիստոնեից և կամ ավելի ճիշտ խոսելով իրավանց պաշտպանություն ընելու կը պարտին ավելի՝ քան թե այս կամ այն եկեղեցվո անդամ եղողներուն»[23], այսպիսով մեծ տերություններին հիշեցնելով արդարությանը պաշտպան կանգնելու իրենց մոռացված պարտքը։

Բայց հայ ժողովրդին օտար միսիոներներից հասած ճակատագրական վնասներից ողբերգություն ապրող Սրվաճյանը չի բավարարվում՝ լոկ փաստն

---

21 Տե՛ս Մեղու, 1860, № 103, էջ 149—151, «Առ նորին վսեմ. սրբ Հենրի Պուլվեր» վերտառությամբ նյութ։

22 Ակնարկում է «Մեծմուայը հավատիսի» խմբագրին՝ Հովսեփ Վարդանյանին և Մուշում կատարված դավանափոխության առիթով (տե՛ս Մեղու, 1860, № 88) հայ լուսավորչականների և կաթոլիկների միջև տեղի ունեցած ընդհարումը։ Այդ առիթ տվեց նաև «Մասիս», «Մեղու» և «Մեծմուայը հավատիս» պարբերականների սուր բանավեճին, որին ինչպես տեսնում ենք չի մասնակցել Հ. Սրվաճյանը, քանի որ լայնախոհություն հանդես բերելով, նա, ընդհակառակը, «Մեծմուայը հավատիսի» կաթոլիկ խմբագրին միացյալ պայքարի է հրավիրում ընդդեմ ազգային-կրոնական պառակտման։ Հետևաբար դժվար է համակերպվել «Մեղվի» 1860 թ. № 95—100 տպագրված հոդվածաշարը Հ. Սրվաճյանին վերագրելու մտքի հետ (տե՛ս Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն Ս ր վ ա ճ յ ա ն, Հրապարակախոսություն, Երևան, 1966, էջ 95—110)։

23 Մեղու, 1860, № 103, էջ 149—150։

արձանագրելով։ Նա աշխատում է նաև հոգեբանորեն վերլուծել կատարվածը և գրում է, թե «այս միջոցը շատ աղեկ մտածեցին անոնք, և այնպիսի հաջողությամբ ի գործ դրին, որ շատերը չկասկածեցին իրենցմե. շատ նեղություններ պատճառեցին հայ ազգին, մեծամեծ վնասներ հասուցին շատ հայերու, թեև տակավին ժողովուրդին բազմացընելու չ՝հաջողեցան»[24]։

Ահա ժողովուրդը պառակտված տեսնելու այս դառը մտորումներն են պատճառը, որ միասնորեն գործելու մղումից ելնելով, նա համերաշխության ձեռք է մեկնում «Մեճմուայը հավատիսի» խմբագրին այն դեպքում, երբ դավանաբանական նեղմտությունը չհաղթահարելով՝ նրան իրենցից վանում էին «Մեղվի» և «Մասիսի» լիբերալ գաղափարախոսները։

Նշեցինք, որ «Մեղվի» հրապարակման առաջին տարիներին նրա համարներում զուգահեռ, հաճախ նույնիսկ միևնույն էջում, հայտնվում էին իրարամերժ կարծիքներ, ինչպես օրինակ Սրվաճյանի հրապարակած հիշյալ «Առ նորին վսեմ. սբր Հենրի Պուլվեր» հոդվածը լույս տեսնելիս։ Հոդվածի տակ, նույն էջում տպվում է նաև «Հետևություն» չստորագրված հոդվածը, որի հեղինակը «ի լրացումն» նույն թեմայի զարգացնում է Սրվաճյանի մտքերը ժխտող տեսակետներ[25]։

«Հետևություն» հոդվածը հայ ժողովրդի ծանր վիճակը՝ ընդհուպ դավանափոխության աղետալի հետևանքները, բացատրում է հայերի անկարողությամբ, որոնք ոչ մի ջանք չեն թափում «իրենց Եվրոպային ճանչցնել տալու»։ Եվ որովհետև «այդ այդպես է», որովհետև «իսկական հայերը» (կարդա լուսավորչականները), իրենց պահում են ստվերի տակ, օգնության աղաղակ են բարձրացնում միայն այն ժամանակ, երբ արդեն «կրակն այրում է նրանց կրունկները», այդ պատճառով էլ եվրոպացիները հայերի մասին գաղափար են կազմում բողոքական հայերի և կամ եվրոպական թերթերի հաղորդած տեղեկություններից, որոնց աղբյուրը դարձյալ բողոքական հայերն են։

Պետք է «օրինավոր» կերպով խնդրել, գրում է «Հետևության» հեղինակը[26] և այն դեպքում «Մեր տերությունը «պատրաստ եմ» կը գոչե ձեր ուզած արտոնությունները շնորհելու։ Երբ, լուսավորչականներն այսպիսի թմրության մեջ մոռանում են խնդրել իրենց օրինական պահանջները, գրում է նա, ապա դրանից օգտվում են «օտարները», այսինքն՝ դավանափոխները (հայ դավանափոխները)[27], որոնք «մեր այս թմրութենեն առիթ առնելով մեր իրավունքները կը հափշտակեն մենք և օրինավոր կերպով աշխատելով կառնուն այն շնորհքները, զոր մենք չենք կրցած ստանալ՝ մեր անհոգությամբը կամ անկանոն խնդրանոքը»։

Այսպիսով, եզրակացվում է «Հետևություն» հոդվածում, «Հոս, Տաճկաստանի մեջ այսպես մեր անհոգությամբը ամեն իրավունք կորսնցուցած ատենիս, ահա անդին մեր իրավանց տեր եղողները կամ ըլլալ ուզողները Եվրոպայի առջև ալ մեզ կը բամբասեն, կը շարախոսեն մեզի համար ու վատանուն կ՝ընեն Եվրոպայի առջև այն ազգը, այն ժողովուրդը, որուն կացությունը, վիճակը, վարքը և անմեղությունը իմաստ ունի ավելի կարեկցություն, հարգանք և համակրություն պիտի զգան անոր համար փոխանակ այն անտարբերության, այն անարգանաց և համակրության զոր արդ կ՝ըզգան՝ իրենց առած տեղեկության հետևանոքը»[28]։

Կարծես թե առանձին մեկնաբանության կարիք չի զգում նաև այն հանգամանքը, որ միևնույն այրող հարցերի նկատմամբ դրսևորված հակադիր

---

24 Նույն տեղում, էջ 149։

25 Նույն տեղում, էջ 151—152։

26 Ի դեպ՝ «Մասիսի» 60-ական թվականների տեսական-գրականագիտական հոդվածների հեղինակ Վ. Պառնասյանը «Մասիսի» էջերում (տե՛ս օր. 1863, № 576) հայտնել է նույն մտքերը։

27 Վերջիններիս հոդվածագիրը իսկական հայեր չի համարում։

28 Մեղու, 1860, № 103, էջ 151—152։

վերաբերմունքից բացի «Մեղվի» տպագրած այս նյութերում արդեն պարզորոշ ուրվագծվում էր ազգային ինքնորոշման հեռանկարներում Թուրքական բարեփոխումներից (Թանզիմաթ) հիասթափված հայ լիբերալիզմի ձևավորվող համակրանքը դեպի եվրոպական երկրները և նրանցից ունեցած ակնկալությունները։ Եթե արևմտահայ դեմոկրատիան հարցը դնում էր ավելի արմատապես, ծանր վիճակից դուրս գալու առաջնահերթ միջոցը տեսնելով ազգային միասնության մեջ, իսկ կողմնորոշումների խնդրում ձեռք էր մեկնում հարևան Ռուսաստանին ապավինած արևելահայ հատվածին, ապա արևմտահայ լիբերալիզմն արդեն տեսական հիմքեր էր մշակում ազգային հարցը Եվրոպայի միջոցով լուծելու համար։

Խնդրի նույն ըմբռնումներից ելնելով «Մեղվի» լիբերալ թևը ժողովրդի սոցիալական չարիքների միակ պատճառը համարում էր օտար կապիտալի ներխուժումը օսմանյան ներքին շուկա և գտնում էր, որ հե՛նց այս երևույթը և ոչ թե նաև այս երևույթը կասեցրեց հայ արհեստավորի նախաձեռնությունը և նրան աղքատության գիրկը նետեց։

Պատմական այս իդեալիզմն ու միակողմանիությունն իրենց զուգահեռներն ունեն «Մեղվի» ավելի վաղ, դեռ 1856, 1857 թվականների հրապարակումներում։ Չփորձելով թափանցել հայ ժողովրդի ողբերգության պատմական արմատները, այդ շրջանի հոդվածներից մեկում ժողովրդի կրոնական երկպառակությունները ու հակասությունները բացատրվում է «ազգային բնավորությամբ», «անմիաբանության ձգտումով»։ «Ընծա» հոդվածում այս միտքն ամփոփվում է հետևյալ ձևակերպմամբ. «... թե որ ունենար ազգերնիս գովելի բնավորությունը (իմա՝ միաբանություն — Վ. Ղ.) կարծե՞ս թե ասնոր փորձանքը, աս փոթեսթանին աղանդը կը մտնե՞ր, կը ծավալե՞ր քանիմը տարվան մեջ՝ ամեն քաղաքի և գյուղի՝ բոլոր Հայաստան»[29]։

«Մեղվի» մի հոդվածում կարդում ենք[30], որ հայերը «օր օրի աղքատնալ սկսան այն ատենեն 'ի վեր որ Տաճկաստան... իր դուռները բացավ Եվրոպայի ճարտարության ու արհեստներուն»[31]։ Արևմտահայ բուրժուազիայի դժգոհությունն էր Թուրքիան գաղութացնող եվրոպական տերություններից, Թուրքիայի վարած, այսպես կոչված «եվրոպականացման» կամ «մոդեռնացման» քաղաքականությունից, որն իր արտահայտությունն էր գտնում ո՛չ միայն «Մեղվի» լիբերալ թևի ելույթներում, այլև այդ նույն ուղղության գաղափարափոխը հանդիսացող «Մասիսի», դրանից էլ առաջ լույս տեսնող «Հայաստանի» էջերում։ Աշխատելով չխորանալ հայ ժողովրդի կյանքը ծանրացնող շատ այլ հանգամանքների և դրանք ծնող պատճառների վրա, արևմտահայ լիբերալները, ելնելով իրենց պատկանելության շահերից, թեև իրավացի, բայց փաստարկում էին միայն մեկ հանգամանք։ Եվրոպական մրցությանը չդիմանալով, կարդում ենք հոդվածում, հայ գյուղացին «էթող իր ընտանիքը, արտերը» ելավ ուրիշ երկիր գնաց, իսկ «ազգը» կորցնելով իր «անհատներին» տուժեց մեծապես[32]։

Այս վիճակից դուրս գալու բանալին «Մեղվի» լիբերալները գտնում էին ազգային երևելիների անձնական օրինակելի վարքի և ժողովրդին հովանավորելու մեջ։ Այդ հանգամանքը հնարավորություն կընձեռեր ժողովրդին «ազգ ընտանիքը կառավարելու հոգը բոլորովին իրմե վերցած ու բարի անձերու հանձնված տեսնելով», «ընտանյաց հոգերու ետևեն» ընկնել, իսկ երբ համոզվեր, որ ատելությունը ազգի միջից բնաջինջ է եղել, ինքն էլ իր «տունեն զանոնք հալածական ընելու» կմղվեր և այդպիսով մեկ ազգային համերաշխ ընտանիք կկազմվեր[33]։

29 Նույն տեղում, 1857, № 12, էջ 280։

30 Նույն տեղում, 1856, № 2, էջ 25—30։

31 Նույն տեղում, էջ 29։

32 Նույն տեղում, էջ 30։

33 Նույն տեղում, 1857, № 10, էջ 218—219։ Տե՛ս № 2-ից «Համառոտ տեսություն հայոց ներկա և ապագա վիճակներուն վրա» շարունակաբար տպվող հոդվածը։

Ահա ժողովրդի բուն ցավերն ըմբռնելու այս միակողմանի հայեցականությունն էր առիթը, որ ստիպեց Հ. Սրվաճյանին առաջին ուժեղ գրչապայքարը ծավալելու «Մասիսի» դեմ, սուր հակամարտության մեջ մտնելով խմբագրի հետ Բանդրմայի դեպքերը մեկնաբանելու խնդրում, Բանակռիվը Բանդրմայի հարցի շուրջ, որը ծագեց «Մեղվի» և «Մասիսի» միջև, նոր ուժով դրսևորեց Հ. Սրվաճյանի դեմոկրատիզմը, ոչ միայն օտար, այլև ազգային կեղեքիչների էությունը և շահագիտական գործելակերպը մերկացնելու նրա կարողությունն ու համարձակությունը։ «Պանտրմայի առաջնորդը չուզողները ի՞նչ մարդիկ են» հոդվածով[34] Հ. Սրվաճյանը բացահայտում էր փողատերերի կամայականություններին թողնված ժողովրդի թշվառ վիճակը։ Հարուստների և հարբստահարվողների այս պրոբլեմի արծարծումը աննախադեպ էր արևմտահայ հրապարակախոսության, առավել ևս մինչսահմանադրական հրապարակախոսության մեջ, երբ դեռ կարծես հաշտ էին ընթանում լիբերալ և դեմոկրատական մտայնության ուղիները համենայն դեպս «Մեղվի» էջերում։ Ժողովրդի թեկնածու թեմական առաջնորդին չուզողները, գրում է Սրվաճյանը, 4—5 մեծատուններ են, որոնք անսքող թալանելու, ժողովրդին անպատասխան կեղեքելու համար ձգտում են պաշտոնանկ անել իրենց ոչ հարմար կրոնավորին, ամենևին ուշադրություն չդարձնելով բողոքող բանդրմացիների վրա։ Հաջորդ հոդվածում Սրվաճյանն արդեն պարզաբանում է, որ «Այս խռովության ալ բուն պատճառը սա է, որ այն մեկ քանի անձերը այնտեղի բոլոր եկեղեցական կառավարությունը և եկամուտները ձեռք անցուցած ըլլալեն զատ՝ ժողովուրդին առտնին և քաղաքական գործերուն ալ մեջ մտնելով՝ ամեն գործերը իրենց ձեռքովը կը տեսնեին, ուղածնուն պես դատաստան կը տեսնեին՝ միշտ հարուստը, այսինքն իրենց ավելի ստակ տվողը իրավանց տեր հանելով...»[35]։

Սրվաճյանը պաշտպանում է կեղեքիչների դեմ ըմբոստացած բանդրմացիներին, որոնք ուզում էին զսպել կամայականություն սերմանողներին և ստիպել Կոստանդնուպոլսի Ազգային ժողովին անսալ իրենց ձայնին։ Ժողովուրդը, որին արդեն հոգնատանջ էին արել հալածանքները, սպառնում էր իր բողոքները չլսելու դեպքում «Հասունի գիրկը» ընկնել։ Սրվաճյանը միանգամայն արդարացնում է այդ զայրույթը և գրում է. «Քանի որ Պանտրմայի մեջ Կում Կաբուի պատրիարքարանին հնազանդող հայ կա, քանի որ Պանտրմայի մեջ Հայ հարուստ բռնավոր կա, քանի որ Ազգային կառավարության մեջ ալ չորս ու կես հարուստը չորս հարյուր տուն հայերեն էվել կարժեն տեյի հավատացող կա՝ Պանտրմայի մեջ ալ ամեն ատեն խռովություն կա»[36]։

Ո՞րն է, գրում է Սրվաճյանը, Բանդրմայի առաջնորդի՝ Հովհաննես Եդեսյան եպիսկոպոսի մեղքը. այն, որ նա ազգային ժողով հաստատեց, որոշելով չորս անձնիշխանների զրկել կամայականություններ անելու իրավունքից։ Այս բանը, բնականաբար, դժգոհություն առաջացրեց դրության տերերի մեջ, նրանք սկսեցին հալածել առաջնորդին, այնինչ Կ. Պոլսի պատրիարքարանում նրան չպաշտպանեցին, չպատժեցին անօրինականություններ թույլ տվողներին, որպեսզի առաջնորդի հեղինակությունն այդ ձևով բարձրանա, կարողանա շարունակել իր բռնած ճիշտ ընթացքը ոչ միայն ազգային, այլև թուրք կեղեքիչների շրջանում։ Այսպիսով Սրվաճյանը մինչև սահմանադրության ընդունումը արդեն քննադատում էր մինչսահմանադրական Ազգային ժողովն ու պատրիարքարանը, մեղադրում էր նրանց ժողովրդի ձայնին չունկնդրելու մեջ։ Այս հանգամանքը նույնպես շեշտում է «Մեղվի» (Սրվաճյան—Վ. Ղ.) և «Մասիսի» միջև եղած տարաձայնությունները։ Մինչդեռ «Մեղուն» գրում էր, թե վերը նշվածն է «Մի՞կ պատճառ Հայոց ամեն ատեն օտարներու ոտքին տակ երթալուն», «Մասիսը» դժգոհում էր «Մեղվի» բռնած ընթացքից և գրում էր, որ «Մեր ազգին վիճակին և ժողովրդյան մեծագույն մասին տգիտությա-

34 Նույն տեղում, 1859, № 19, էջ 149—150։

35 Նույն տեղում, № 20, էջ 153։

36 Նույն տեղում, № 21, էջ 163։

նը նայելով, ազգային կառավարության գործերուն վրա չափով, խոհականությամբ և արդարասեր ոգվով պետք է դատաստան ըլլվի հրապարակական թերթի մը մեջ, և ոչ թե անոր հարգն ու հաստարումը կոտրելու, և բարոյական ազդեցությունը՝ որ անոր միմիայն զորությունն է՝ տկարացնելու կերպով...»[37]։

Այս տարաձայնությունների բացահայտումը նպաստում է հասկանալու, թե ինչու հետագայում ես, սահմանադրության համար պայքարող հրապարակախոսը այդպես անխնա սկսեց քննադատել նա՛և Սահմանադրական ժողովն ու հոգևոր վեհապետությունը, երբ հե՛նց սահմանադրության հրապարակման տարում համոզվեց, որ նոր ստեղծված վարչության ղեկն իրենց ձեռքը վերցրած ազգային երևելիները դարձյալ պաշտպանում են միայն ուժեղների շահերը, անտեսելով մեծամասնությանը։

Սահմանադրությունն ընդունելուց մեկ ամիս չանցած «Մեղուն» վրդովված գրում էր, թե ինչպես Ազգային ժողովն ու նրա երեսփոխանները ազատ են արձակել Վանի Պողոս վարդապետի նման մի հանցագործի՝ առանց նրան գոնե կարգազուրկ անելու։ Վերջապես մինչև «Մեղվի» խմբագրին ուղղված Մ. Նալբանդյանի հայտնի նամակի տպագրությունը[38], Սրվաճյանը ամսագրի № 118-ում հրապարակում է «Վանցի Պողոս եղբայրը» նյութը, ուր պայքարի հրավեր նետելով ողջ Ազգային ժողովին, նրա կրոնական խորհրդին, ի լուր ամենքի հայտարարում է, թե «Մեղուն» իրեն խաբված է զգում ոչ թե մասնավորապես Պողոս վարդապետի հանդեպ արված թույլ դատի պատճառով, այլ այն պատճառով, որ սուտ պատրանք է եղել իր կարծիքը «կրոնական ժողովին իր պարտուցը հսկողության վրա», ուստի կրոնական ժողովի այդ կողմնակցությունը դատապարտելով՝ ինքը, «Մեղուն» է պարտավորվում ժողովրդի առաջ մերկացնելու Պողոս վարդապետի հանցանքները և դնելու իր դատակնիքը[39]։

Սրվաճյանն իր բացահայտ պայքարում ընդդեմ իրենց շարդարացնող Ազգային և Կրոնական ժողովների, ավելի հեռուն գնաց և դիմեց չտեսնված մի քայլի, օրագրի միջոցով իր վճիռը հայտնելով հասարակությանը՝ խնդրեց նրա կարծիքը. «Ընթերցասիրաց ընկերություն» գրասենյակը գալով՝ իրենց ստորագրությունները դնել «Մեղվի» դիմումի տակ։ Այդ օրերին Կոստանդնուպոլիս եկած Մ. Նալբանդյանի համար թերևս նույնիսկ անսպասելի էր պայքարի նման մակարդակով արված փաստը և նա, անմիջապես համերաշխվելով առաջադրված միջոցին, իր վերը նշված նամակում գրեց, թե «Հայոց ազգի մեջ դեռ առաջին անգամն է, որ մի օրագիր, իր վճիռը հրապարակելով, խնդրում է բանավոր հասարակության կարծիքը։ Անպատմելի ուրախ ենք այս բանի վերա»[40]։

Եթե Մ. Նալբանդյանի համար մինչև Կոստանդնուպոլիս գալը թերևս որոշակի անակնկալ էր Հ. Սրվաճյանի նման հրապարակախոսին հանդիպելը, ապա Սրվաճյանի համար այդ նույնը չէր, որն ապրել ու ոգևորվել էր Նալբանդյանի հայացքներով՝ վերջինիս հրապարակախոսական ասպարեզ մտնելու առաջին իսկ օրից։

Բնորոշ է այս տեսակետից այն հրճվանքը, որ հակառակ լիբերալ պահպանողականների, ապրում էր Սրվաճյանը արևելահայ մեծ դեմոկրատի մուտքը Կ. Պոլիս արձանագրելով։ «Շատոնց ի վեր,— խոստովանում է Սրվաճյանը,— կը ճանչեինք պ. Նալբանդյանը իր հրատարակություններովը Հյուսիսափայլ օրագրին և իր ոգվույն սկզբանցը լավ ծանոթ ըլլալով հեռուն, հեռուն կօրհնեինք նաև իր և իր արժանապատիվ աշխատակիցներուն ջանքերը 'ի լուսավորություն Ազգին և մասնավորապես ռուսիաբնակ ազգայնոց»[41]։

---

37 Նույն տեղում, № 20, էջ 155, Մասիս, 1859, № 429։

38 Մեղու, 1860, № 119, էջ 273—276։

39 Նույն տեղում, № 118, էջ 266—267։

40 Նույն տեղում, № 119, էջ 273։

41 Նույն տեղում, 1860, № 117, էջ 258։

Սրվաճյանը երջանիկ է ծանոթանալու «Հյուսիսափայլի» գլխավոր աշխատակցի հետ ոչ միայն այն պատճառով, որ «Հյուսիսափայլը» համարում է «Ռուսիո մեջ», «ոչ թե միայն սկզբունքներովն ու ազատամտությամբը այլ նաև նյութերուն ընտրությամբն ու մեջը փայլած ամեն տեսակ գիտություններովը» «էն՝ պատվական հայ օրագիրը», այլև որպես, իրոք, հայ ժողովրդի միասնությամբ ու ապագա ազատագրությամբ շահագրգռված գործիչի, ուրախ է, որ Նալբանդյանի միջոցով կամրանա կապը արևելահայ «ազգայնոց» հետ, որոնց Նալբանդյանը «մեր իղձերն ու ջանքերը հասկրցընելով զանոնք ալ մեզի գործակից ընելու պիտի աշխատի» (ընդգծումը մերն է—Վ. Ղ.)։

Թվում է բացատրության կարիք չեն զգում «Մեղվի» խմբագրի ազգային գործելակերպի լայն ընդգրկումներն ու ծրագրերը ընդհուպ մինչև «Ռուսիաբնակ ազգայնոց» հետ գործակցելը, որոնց իրագործման հեռանկարներում նա հենվում էր Մ. Նալբանդյանի կանխագծումներին ու մտադրություններին։ Այստեղից հեշտ է եզրակացնել, թե ինչու դեռ մինչև Մ. Նալբանդյանի Կոստանդնուպոլիս գալը Հ. Սրվաճյանը «Մեղվի» տարբեր համարներում արտատրպում էր հատվածներ «Հյուսիսափայլում» տպագրված Մ. Նալբանդյանի ստեղծագործություններից, ինչպես «Մանկության օրեր», «Ազատություն»[42] բանաստեղծություններն են, կամ կոմս Էմանուելի «Հիշատակարանից» մի շատ բնորոշ հատվածը, ուր մասնավորապես ասված էր. «Ազատության հաստարանը և լծակը է հասարակ ժողովուրդը։ Սի ազգ, թո՛ղ որքան կամի, հարուստ լինի երևելի մարդերով, այնուամենայնիվ այդ ազգի ազգության մեքենան շարժվում է հասարակ ժողովրդի վերա, սա է այդ մեքենայի առանցքը, լծակը և հաստարանը»[43]։

Սահմանադրությունը Սրվաճյանը գնահատում էր ելնելով կոնկրետ այն սկզբունքից, թե որքանով այն նեցուկ կլինի ժողովրդին և սահմանադրության հռչակման առաջին իսկ օրից սթափ հայացքով էր զննում Ազգային ժողովի գործունեությունը, այնինչ սահմանադրության ընդունումից մեկ տարի հետո «Մեղվի» լիբերալ թևը գրում էր, թե «Երանի՜ կուտան հեռաբնակ հայերը տաճկաստանցի հայերուն» իրենց վայելած սահմանադրական արտոնությունների համար»[44]։

Այսինքն՝ մեղվական լիբերալիզմը շարունակում էր իր ընթացքը Երուսազեմի խնդրի, կամ «ներսեն ու դուրսեն» պայքարի, Պողոս վարդապետի դատի, ազգային հիվանդանոցում իշխող անտանելի վիճակի, սահմանադրական կենտրոնական վարչության կողմից դավառահայերի իրավունքների սահմանափակման, նրանց բողոքների նկատմամբ եղած անտարբեր վերաբերմունքի և այլ հարցերում, որոնց դեմ անհաշտ պայքար էր սկսել Հարություն Սրվաճյանը[45]։ Եթե նրանք փորձում էլ էին քննադատաբար կշռադատելու հետսահմանադրական իրավիճակը, ապա ընդամենը գրում էին, թե «Հայը ծնեց մանուկ սահմանադրությունը», բայց «սահմանադրության գործադրությունը որո՛ւ ձեռք որ հանձնեց՝ անոր իրմե պահանջած ձեռնտվությունը զլացավ, չզորացուց անոր բազուկը», այսինքն ժողովուրդն էր մեղադրվում անտարբերության մեջ դեպի երեսփոխանները և ավելացվում էր, թե սահմանադրությունը խափանելու ելած հետադիմության դեմ մղած պայքարից հաղթող դուրս գալու «միակ հույսը այսօր ազգային երեսփոխանաց վրա մնացած է»[46]։

---

42 Նույն տեղում, № 107, էջ 183, № 109, էջ 198—199։

43 Նույն տեղում, 1880, № 101, էջ 130։

44 Նույն տեղում, 1861, № 127, էջ 58։

45 Այս նյութերի փոքր ի շատե մանրամասն վերլուծությունը ցավոք դուրս է տվյալ հոդվածի ընձեռած հնարավորություններից, թեև այդ բանն անշուշտ լրացուցիչ լույս կսփռեր «Մեղվի» սվաճյանական և լիբերալ-սահմանադրական մտայնությունների միջև եղած հակասությունների վրա։

46 Մեղու, 1861, № 134, էջ 121, 126 և այլն։

«Մեղվում» երկու հակադիր դիրքորոշումների առկայությունը բացահայտող նյութերի թվարկումը կարելի է շարունակել։ Այս խնդիրն, անշուշտ, ավելի ընդարձակ ուսումնասիրության պահանջ ունի։ Միայն թվում է, թե բերվածը թույլ է տալիս ասելու, որ «Մեղվի» հիմնադրման օրվանից մինչև սահմանադրության հրապարակումն ընկած միջոցում Հ. Սվաճյանի աշխարհընկալման մեջ որևէ «թռիչք» կամ «էվոլյուցիա» մի որակից դեպի մյուսը տեղի չի ունեցել, այլ «Մեղվի» էջերում աստիճանաբար գերակշռել է սվաճյանական դեմոկրատիզմը, որը 19-րդ դարի 60-ական թվականներին արևմտահայ քաղաքական հոսանքների վերջնական սահմանազատման կարևոր արտահայտություններից մեկն էր։

ВОКРУГ МИРОВОЗЗРЕНИЯ АРУТЮНА СВАЧЯНА

В. Г. ГУКАСЯН

Резюме

В первые годы издания журнала «Мегу» в нем сосуществовали два политических направления—демократическое и либерально-буржуазное. Последнее возглавлялось известным конституционалистом и в некотором смысле ментором журнала—Григором Отяном. Это обстоятельство послужило поводом к тому, что многие теоретические, историко-публицистические, полемические и отчасти написанные на злободневные темы статьи, выходившие исключительно без подписи, традиционно приписывались А. Свачяну, редактору-издателю, что мешало правильному осмыслению публицистического наследия А. Свачяна.

Общая направленность, тематика, содержание, стиль опубликованных в «Мегу» материалов позволяет определить их принадлежность к тому или иному течению. Исходя из этого, становится ясным, что мировоззрение А. Свачяна, вопреки бытующему мнению, не претерпело качественного, скачкообразного перехода от либеральных воззрений к демократическим. А. Свачян был и остается выразителем интересов народа.